

Ա Ր Կ Ա Ծ Բ

Ա Ր Ի Ս Թ ՈՆ Յ Ի Ի Ս Ի Ն

(Շարունակութիւն . տես թիւ 5 .)

Գետոյն երկայնու թեամբ յառաջանալով Սոփրոնիմ՝ պարզ և միջին, բայց դեղեցիկ ճարտարապետութիւն ճիշտ և ուղիղ համեմատութեամբ շինուած տուն մը տեսաւ : Այնտեղ ոչ մարմարիտն, ոչ սոկի, ոչ արծաթ, ոչ փղոսկր և ոչ ծիրանեայ կահկարասիներ գտաւ, այլ ամեն բան մաքուր և լի շնորհօք, եւ վայելչութեամբ բայց առանց շքեղութեան : Աղբիւրակն մի գաւիթին մէջ կը հոսէր, և կանաչ գորգի մը երկայնութեամբ փոքրիկ ջրանոցք մը կը կազմէր : Բուրաստաները ընդարձակ չէին, ուր մարդիկներ կերակրելու օգտակար տունկեր և պտուղներ կը գտնուէին . որարտիղին երկու կողմէն երկու անտառակներ կ'երեւէին, որոց ծառերը՝ գրեթէ իրենց մօր սցոխքն երկրին պէս հինօրեայ էին, և սրաց թանցրակիտ ստերը այնպիսի ստուեր մը կամ շուք կընէին, որ արեգական ճառագայթներէն անգամ անթափանցելի կըլլան : Այսինք սրահն մը մէջ մասն ուր քաղցր ճաշ մը ըրին, այնպիսի կերակուրներով զորս բնութիւնը պարտաւարաց մէջ կը մատակարարէ . և ոչինչ հան չէր տեսնուէր այն ամէն բաներէն, զորս մարդկանց փափկութիւնը քաղաքացի մէջ սրտներու կ'երթայ այնքան հեռի և այնքան թանկագին. ասանց կերակուրն էր կաթ, այնչափ քաղցր, սրբան էր Ապօլոնի՝ Ամմեթ թագաւորի մօտ հովուութիւն ըրած ժամանակ կ'թած կաթը . և մեղր՝ որ աւելի ընտիր էր Աիկիլիայի մէջ եղած Հիպլոյի մեղուացի մեղրէն, կամ Հիմեթ լեռան Ատտիկէի մէջ . կային

նաեւ որարտիղին կանանկեղէններէն և պտուղներ, զոր նոր ժողոված էին :

Նեքտարէն աւելի զովայուցիչ գինի մը կը հոսէր մեծ ամաններէն՝ քանդակուած բաժակներու մէջ : Այս սակաւապետ և ժուժկալ, բայց քաղցր և խաղաղիկ ճաշի միջոցին, Արիսթոնօիւս չը կամեցաւ երբէք սեղան նստիլ : Նախ և առաջ ձեռքէն եկած ջանքը զանազան պարտուակներով ՚ի գործ դրաւ, իւր համեստութիւնը ծածկելու համար, բայց վերջապէս երբ որ Սոփրոնիմ ուղեց զայն ստիպել, յայտնեց որ ինքը երբէք չը պիտի սեղանակից ըլլայ թուանն Ալմինի, որուն այնքան երկար ատեն միեւնոյն սրահին մէջ ծառայած էր :

Ահաւասիկ կը սէր Արիսթոնօիւս Սոփրոնիմին, այն վայրը՝ ուր այն իմաստուն ճերմակին սովորութիւն ունէր կերակուր ուտելու . ահա իրեն բարեկամաց հետ խօսակցելու տեղը . ահա իրեն խաղացած տեղը . ահա այն վայրը, ուր նա կը ձեմէր Հեզիօս և Այմեր կորդալով . ահաւասիկ վերջապէս այն վայրը, ուր նա գիշերը կը հանգչէր : Այս պարագաները յիշելով իրեն սիրալը կը խանդաղատէր և արտասուքը աչքերէն կը հոսէր : Առաջէն զկիկ Արիսթոնօիւս ցուցուց Սոփրոնիմին այն գեղեցիկ մարգագետինը, ուր իրեն բառաչող քաղմածիւ հօտերը կը թափառէին գետոյն ափանց վրայ, յետոյ նշմարեցին ոչխարաց հօտերը որք պարարտ արօտներու վրայ արածեղէն կուգային. մայրերը որք շարունակ կը մայէին և լի էին կաթով, իրենց փոքրիկ և ցատկրտող գառանց հետ հոն կընթանային :

Արիսթոնօիւս՝ Սոփրոնիմին ցուցնելով այս տունը, գերինները, խա-

շինքները և երկիրը որ այնքան պըտ-
 զարեր դարձած էր բազմաճան մշա-
 կութեամբ, անոր այս խօսքերն ըսաւ .
 «Շատ ուրախ եմ զձեզ տեսնելով
 ձեր հայրենի հին ստացուածոց մէջ
 որուն վրայ ահաւասիկ ես գոհ եմ
 ամենայնիւ . որովհետեւ ձեզ ժա-
 ռանգել կուտամ այն վայրը՝ ուր այն
 քան երկար ժամանակ Ալլինին ծա-
 ռայեցի, խաղաղութեամբ վայելէ
 այն որ անոր կը պատկանէր, ապրէ
 երջանիկ . և պատրաստէ Քեզ աւելի
 քողոր վսիճան մը քան անորինը : Ա-
 ռիսթոնօիւս՝ մի և նոյն միջոցին անոր
 պարգեւ մը ըրաւ այն բարկրէն, ու
 ըրինօք վաւերացեալ բոլոր հանդիսա-
 կատարութեամբ, և յայտնեց որ ի-
 իրեն ժառանգութենէն բոլորովին կը
 զրկէ իւր բնական ժառանգները, ե-
 թէ անոնք իւր բարերարին՝ Ալլինի
 թոռան ըրած պարգեւին դէմ դնե-
 լու չափ ապերախո գտնուին : Բայց
 սցարանս ալ Ալլինիսթոնօիւսին սիրտը
 գոհացնելու համար բաւական չէր :
 Իւր տունը ապէն յառաջ, զայն նոր
 կարասիներով բոլորովին կը զորդարէ
 որո՞ք պարզ, ճշմարտագէտ համեստ և
 վայելուչ, բայց մաքուր և հաճոյ էին :
 Շտեմարանները Բեմսօրի հարուստ
 պարգեւներով լեցուց և ժառանգե-
 ըր Քիօսի գինիով, որն որ Հիպէի և
 Կանիմեաի ձեռամբ մեծին Արամազ
 դայ սեղանին գործածուելու արժա-
 նի է . փրամեննան գինի ալ բաւա-
 կան լեցուց հանդերձ Հեմեթի եւ
 Հիպպոսի մեզրի առատ համբարներով
 Ատաիկէի իւզով, որ նոյն իսկ մեզրին
 չափ քողոր է : Արոնց վրայ յաւել-
 ցուց նաեւ շատ մը նրբաթել և ձիւ-
 նէն աւելի ճերմակ բուրգեր, որք
 այն փախուկ ոչխորաց կողպուանե-
 ընն էին, որ Անկիլիացի պարտրտ ա-
 ըօտներուն մէջ և Արրատի լեռան վը-

ըայ կը ճարակէին : Ահաւասիկ այս
 վիճակին մէջ տուաւ իւր տունը Սօֆ-
 րանիմին ծերունին Արիստոնօիւս, ա-
 նոր տուաւ նաեւ յիսուն տաղանդ
 դրամ, և իրեն ազգականաց այն ինչ
 քերը պահպանեց, զորս Կաղու մէն
 թերակղզոյն, որ Իզմիրի շրջականե-
 ըրն է, Բիպէտէի և Գօթօթօսի մէջ
 ունէր, և որք բաւական մեծ արժո-
 զութիւն ունէին :

Պարգեւատուութիւնը լիննալով
 Արիստոնօիւս նաւ մտաւ, Իօնի վերա-
 դառնալու համար : Սօֆրանիմը՝ այս-
 պիսի անհամեմատ երախտեաց և բա-
 րերարութեանց վրայ հիացած և գո-
 թոված արտասոււածօր աչօք մինչեւ
 նաւը անոր ուղեկցեցաւ, զայն միշտ
 իրեն հայր կոչելով և իւր բազկաց
 մէջ սեղմելով : Արիսթոնօիւս յա-
 ջող և երջանիկ նաւարկութեամբ մը
 իսկոյն իւր տեղը հասաւ . իրեն ազ-
 գականներէն և ոչ մին համարձակե-
 ցաւ գանդատել այն պարգեւին վը-
 ըայ, զորն որ Սօֆրօնիմին ըրած էր : Այս
 իբր իմ վերջին կամքս կ'ըսէր նա կուտ-
 կիս մէջ հրաման ըրի որ եթէ ձեզմէ մե-
 կը ընդգրիմանայ այն պարգեւէն զոր
 ըրի Ալլինի թոռանը, բոլոր իմ ըս-
 տացուածներս ծախուին և Իօնիի ազ-
 քատաց բաշխուին :

Ս.ՆՄՍ.ՀՈՒԹՒԻՆ ՀՈԳԻՈՅ

Վաթսուն տարիէ ՚ի վեր յուսա-
 հատութեան և մահուան իրաւուն-
 քը փաստաբանուեցաւ . այժմ կը ձեռ-
 նարկեմ ես յուսոյ իրաւունքը պաշտ-
 պանելու : Բան մը զիս կը դրդէ ձայ-
 նըս բարձրացնել և իմ դատս յատեան
 կոչել : Ալ տաղանկացոյ մարդու ուղ-
 զեալ սա խօսքերը ըսէին . հասարակո-
 թան չ'ունիս, յոսապոս բան չ'ունիս, և ան